

ԱՎԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 Թր
Տարեկան	6 "
Վեցամսեայ	15 "
Մի ամիս	8 "

Ավերիկայի համար	3 սյր.
Տարեկան	1.50 "

Մանուգրան տոյր առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեսին առաջին անգամը համար 20 0/0 զեղչ կըլայ:

Վառնայի համար ձևով 10 սանթիմ

ՇԱՐՋՈՒՄ

ԻՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ՝ ՔԱՂՍՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՄԻՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇՈՒԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ԹՐԵՐԸ

Նախկին ևրդալի գրական խմբագրութեան հասցիին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoun“ Varna (Bulgarie)

Արևմտահայերէն համար ձևով

(20 ՍԱՆԹԻՄ)

Պուշկարիոյ համար ձևով

(15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք ևս չեն տուիր

«ՇԱՐՋՈՒՄ»-Ի ԲԱՎԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՎՆԵՎԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՄԻԱԿ ԽԵԼԱՔԻ ԶԱՄԲԱՆ

Այսօր մենք կը հրատարակենք հին հնչակեան կարեւոր գործիչ, «Հնչակ»-ի երբեմնի խմբագիրը և Զէյթունի ապստամբութեան ասան իր ունեցած մասնակցութեամբ յայտնի Հրաչեայ Մարալի հայ ժողովրդեան ուղղած մէկ կոչը:

ԳԵՐԻ պառակտումներէն վերջ այսօրինակ կոչ մըն ալ կովկասի հնչ. պատգամաւորը Սոսի Գուգարը և իր ընկերները հրատարակ հանդիսին: Երկու կոչերն ալ ունին իրենց բանական պատճառները: Քննենք ուրեմն զանոնք: Իր սեփական գոյութիւնը պահելու համար անհատ մը կամ կազմակերպութիւն մը հնազանդելով բնութեան օրէնքներուն ստիպուած է կռիւ մղել: Այս պայքարին մէջ կիրնայ ինչ որ հին է և անպէտ ու ուժեղօրէն դուրս կուգայ, կեանքի կրկէս կը շնչէ նորը ու պիտանին: Թէ բուսական և թէ կենդանական աշխարհի մէջ կ'տիրէ այս օրէնքը: Տեսակները միշտ կը փոխուին, հինին կը յաջորդէ նորը կենսունակ ուժերով:

Նոյն այս օրէնքը կը տիրէ նաև հասարակական կեանքի մէջ: Ժողովուրդներ, կազմակերպութիւններ կը ծնին և կը կատարեն որոշ գեր, որմէ վերջ պակայն սպարէլէն կանհետանան ժամանակին պահանջին համեմատ տեղի տալով իրենցմէ աւելի զօրեղին: Յեղաշրջման այս երեւոյթը ունի ի հարկէ իր պատճառները և շարժառիթները: Բայց ատեն չեն փոխեր իրողութիւնը: Պատմութեան մէջ և բնական եզրիպատկան, յունական, հռոմէական փոխուած քաղաքակրթութիւն մը, բայց անոնք հիմայ չկան: Ինչպէս հին Յունաստանը, որովհետեւ իր մէջ երկպառակեցաւ, ինչպէս Հռոմը, որովհետեւ կեսարները և իմպերատորները անկարող էին կայսրութեան սահմանները նոր ցե.

զերու խուժումին առջեւ պաշտպանել:

Երբ դիտենք մեր յեղափոխական կեանքը, կը տեսնենք յեղաշրջման նոյն երեւոյթը և հասկնալով զայն կը կատարուի սակայն զէպի ետ և զէպի առաջ, այսինքն կարտայայտուի իր բնական յետադիմութիւն կամ իր բնական զարգացումը: ԳԵՐԻ սկսեալ հնչ. կուսակցութիւնը սկսաւ յետադիմել և երթալով հասաւ քայքայման վիճակի մը:

Այս միջոցին սկսաւ գոյութեան կռիւը, պէտք էր կուսակցութիւնը խուսափեցնել վերջնական լուծման վտանգէն: Բնատուեցաւ միջոցներ: Իրենց պառակտելէն վերջը «Վերակազմակերպութեան» իրեն միջոց տիրահաշակ «Մարտ»-ին մէջ առաջարկեցին Սուլթանին հետ հաշտուիլ, տեսնելով առաջարկի ապարդիւնութիւնը և հայ ժողովրդի յեղափոխական արածագրութիւնը, անոնք փոխեցին իրենց շարժումը և հրատարակ նետեցին փոխուած Ֆրազ մը — միութիւն: Առաջին անգամ միութիւն Հ. Յ. Դաշնակցութեան հետ, բայց Դաշնակցութիւնը իր բնական յեղափոխական գործը և իր պատմական բարձր կոչման գիտակից կազմակերպութիւն մը ինկածներու ձեռք չէր կրնար տալ: Այսպէս վերակազմակերպութեան շինքը: Հինքն ալ ըրին իրենց փորձերը, բայց լուծումը անխուսափելի էր: Այն ատեն զիրար «գաւաճաններ» և «անզըմականներ» անուանող մարդիկ իրար հետ կ'ընդունին անխորհուրդ միութեան մը գաղտնիք: Ի հարկէ այդ երկար չէր կարող տևել ու վերջացաւ հառելի ոճիւրներով: Ոճիւրներ, որոնք ունեցան տխուր հետեւանքներ: Ինչպէս հայ յեղափոխութիւնը, տուժեց հայկական հարցը: Տէլքասէ, որ միշտ չամակրանքով վարուած էր զէպի տանջուող Հայաստանի արգար գատը, այս ոճիւրներուն վրայ իրեն ուղղուած հարցումի մը պատասխանին մէջ հայկ. գատը յիշատա.

կութեան մը անգամ չարժանացուց: Այս ամէնը հնչ. հատուածներու վերջնական լուծումը կը նշանակէ: Սակայն գոյութիւնը պահպանելու համար ճճին անգամ կը լարէ իր վերջին ուժերը: Եւ հնչ. հատուածները կը խորհին հիմա կեանքի նոր աղբիւրներ ստեղծելու վրայ: Նորերէն մաս մը երեսայական անմտութեամբ նորէն չեն հրատարար միութիւն պահանջել, որի շուրջ մտնալ կառավարիչ ուրիշ ցեղաբանութիւններ և ալ ու ձախ կը դատէ ու կը դատապարտէ, կարծելով որ իրենց մեծագիտակից աշխատէ ընդունելով պիտի կարողանան տալ: Իրենց գոյութիւնը պահպանելու միջոց կը փնտռեն նաև հին հնչակեաները և կառավարիչ մեզ սօցիալիզմը, առանց խորհելու սակայն, թէ այդ մեր մէջ մտցնելու համար դեռ մինք գարբուրը քաղաքակրթութեան կը կարօտինք, առանց խորհելու որ սօցիալիզմը թէեւ նոր և լաւ միտք սակայն անմարտելի է հայ ժողովրդին համար և չի համապատասխաներ անոր ցանկութիւններուն, անոր պահանջներուն: Այս պատճառաւ հնչ. օրգանները ինչպէս գիրար հակասող անհեթեթ գրութեան մը մէջ:

Այս բոլորէն ետքը Հնչակեանութիւնը հասած է այսօր, ինչպէս Հրաչեայ կանուանէ, «Ար. շակաւանի» մը գրութեան և մենք այդ Արշակաւանով ալ չէինք զրազեր, եթէ «Հնչակ»-ի երբեմնի խմբագիրը հրատարակ չի շնչէր միութեան կենսունակ առաջարկով: Ընդունելով որ Հնչ. կուսակցութիւնը վերածուած է «խորտակուած նախ մը բեկորներ» և կերթայ «արամագծօրէն հակառակ հայ ժողովրդի կենսական շահերին և ձգտումներին», ընդունելով թէ «նրան չի կարելի վերանորոգել, լուծելու ու իր ընկերներուն յիշեցնելով հայ ժողովրդի կեանքին սպառնացող վտանգը, յիշեցնելով այն բոլոր պարտականութիւնները, որոնք նուր.

րական պէտք է ըլլան ամէն մի հայու սրտին, Հրաչեայ Մարալ, «Հնչակ»-ի երբեմնի խմբագիրը, կոչ կընէ իր բոլոր հայրենակիցներուն, որ թողնելով ամէն նախապաշարուած և անհատական հաշիւ, քան «հաւաքարար» եւ անհատաբար, ձեռք ձեռք ի տուած աջակցին Հ. Յ. Դաշնակցութեան, որ կանգնած իր կոչման բարձրութեան վրայ յառաջ կը տանի տանջուած ժողովրդի ազատագրութեան Ս. Գործը:

Ինչպէս յիշեցինք այս նոյն առաջարկը աւելի կանուխ ըրաւ Սոսի Գուգարը և իր ընկերները: Եթէ կուգեն յեղափոխական անհատներ կամ մարմիններ գոյութեան իրաւունք պահպանելու և օգտակար ըլլալ ահա՛ այս է միակ ուղին և միակ խելացի ճամբան, որ հայութիւնը պիտի առաջնորդէ զէպի ցանկալի նպատակակէտը:

Արեւմտեան յառաջ գէպի Դաշնակցական Զինուորագրութիւն... Մարգարէտներ

ԷԼԻ ՍԻ ՀԱՐԻԱԾ

Մեզ վիճակել է ապրել շարունակ մտայն ու խաւար մթնոլորտում: Ո՞վ է կնքել, խարանի այդ բազր մեր ճակատին, ո՞ւմ ձեռքերն են նրան կանգնեցրել մեր կեանքի ճանապարհին: Անհամար շարքեր, կեանքի մի շարք ամենատաժան հանգամանքներ կոռլ են հայ կեանքի այս սպաննիչ պայմանները, այս տխուր իրականութեան շրջանը, որ բոլորում է այսօր հայ համայնքը ամբողջ աշխարհում: Յամենայն դէպս այդ պայմանների ստեղծման գործի մէջ մեծ դեր են խաղացել, կարեւոր ֆակտոր են եղել եւ մեր սեփական ձեռները: Հին դարերի ճակատագրի խորհրդաւոր փիլիսոփայութեան ըմբռնումը այսօր յեղաշրջել է հէնց կեանքից: Մարդիկ ու հասարակութիւններ այսօր ծնւում են առանց ճակատագրի: Ամեն անհատ ու հասարակութիւն այժմ ինքն է հարթում, բաց անում իր բազրի ճանապարհը, ինքն իր սեփական ձեռքով է կերտում իր ճակատագիրը:

Մասաչուսեթս, նրանից խրո-
չում է մարդկութիւնը : Չէ՞ խաւ-
րի գրում են յղացում ու գործ-
ւում այնքան բազմազան ոճերն
Իսկ մարդկային հոգին ձգտում է
միշտ գէլիլ յոյսը, դէպի բարձր :
Ոճրի ծոցը, հոգեհոտ խաւարը ան-
տանելի է, ճնշող, խեղդող : Ու-
ար գիշերին մարդիկ գուրգուրում,
հրճւում են պլպլան լոյսի մի անգոր,
դարկադէմ շաւիղին, առանց նրան
չարիքը մարմին առած՝ հազար գը-
խանի վիշապի պէս կը սողայ մահ
բուրելով կենդանութեան վրայ : Ու-
արը մահի բնկերն է, մէկը միւսի
անբաժան ատուերը :

Սրանից դեռ տասնհակ տարինը
առաջ հայ ժողովուրդը հրճվում էր
իր մտայն հորիզոնի վրայ պլպլացող
մի քանի սյոք տեսակ շատախիղճի,
ճաճանչների լոյսից : Տղիսութեան
խանձը ու համառարած խաւարի մէջ
չողոցում էին գորգացման ճրագները,
հայ վարժարանները զպրոցները կող-
կատում : Գանի կեանքեր մարեցին,
որպէսզի այլ լոյսեր ծնունդ առնէ-
ին : Ժողովրդի կրթիչ մասուլը հայ
սպարապետութիւնը սկսեց ծիլ տալ
հասարակութեան համար զոճ ող հո-
գիները նուիրեցին այդ գործին,
հայերէն գրքերը բարձրում էին եւ
խոսքան բոյց արգաւանդ հողի վրայ
ընկնում էր կուլտուրայի սեր՛ը :
հունար, Սա էլ մի լուսատու : յու-
սատու ճառագայթ էր էլի : Վերջա-
պէս անատական այնքան զոճ քե-
րութիւններից յետոյ հայ հրապա-
րակազմութիւնը : Արժուներին
կրթութեամբ վաճառեւած բազմազան
կրթիչի առաջ կանգնած ազիսու-
թեան անառարբութեան ու ինքնա-
մոռացութեան պարիպներին, կուրծ
քերը փշուեցին, մարդիկ գաղափա-
րի համար շոքեցը քայլերով ընկան
նատակոտ ճանապարհում, սակայն
նրա հիմքերը, հայ մասուլի, հաս-
տատեցին խաւար տարածութեան
մէջ իրեն լուսավառած աշտանակ :
Այդպէս լաւ էր, մարդիկ սարում է-
ին լուսոյ մէջ, սերունդը, նոր հաս-
նող մատաղ սերունդը կրթում,
զարգանում էր լուսաւոր մթնոլոր-
տում : կհաճում պայքարելու յոյս
կր ներշնչում :

Լաւ չըջան էր, կենսատու, կեանք
ատու, հրապուրիչ շրջան : Ինչքան
կարճ կեանք ունեցաւ սակայն նա :
Հիւսիսից, խաւարի խորքից փչեց
սառը քամին : Ուսարսաէր բե՛ական-
ը շի սանում լոյս : Ճառագայթնե-
ները մէկը միւսի ետեւից մարան,
չքայլան մահի շնչից : Ոճրը խաւա-
րում է գործւում, նրան է սիրում :
լրջում մարդասպանութիւն չի գործ-
ւի :

Ի գործընթաց փակեցին, հրատա-
րակական գործը մարեց, խախտե-
ւեց : Ուսարը դատու աւելի թանձր,
աւելի խեղդող : Մնաց մի հատ ան-
գոր, գունատ լոյս ընդհա՛ուր սեւի,
խաւարի մէջ, որը մահից սարսա-
փած ասիւս գողգողով էր փայլում :
այնչափ էր նա ճնշւած, կաշկանդ-
ւած : Ինչ հայ լրագիրն էր, մի հա-
տիկ լոյս սող ճաճանչը...

Ամսոյս 18ին թիֆլիսից Բերլինի
գեղականական մի թերթի խփած հե-
ռագիրը հաղորդում է, թէ բոլոր
հայ լրագիրները կողկատում գատա-
պարւած են երկու ամսով խախտե-
մաբ : Ուրեմն այլեւս հայերէն ոչ մի
սատ չը պէտք է սուղորութեան
յանձնուի, որովհետեւ նա հային է

օգտակար լինելու : նրա մտայն ու-
ցատու կերպարանքն է լուսաւորելու :
Այժմ կատարեալ, իսկական խաւար
է տիրելու... Այդպէս են պահանջում
հիւսիսի բռնակալի շահերը : կողկա-
տում այլեւս աւելն ինչ խաւարում
մթութեան մէջ է գործելու : Սա ա-
մենավերջին ու նոր հարւածն է ի-
հարկի : Մեղանում արդեօք հայկա-
կան հարցի մասին գեռ Պետերպուր-
կի դիւանագէտներից ակնկալու-
թիւններ յուսացող մարդիկ, եւ այն
էլ հասարակական գործիչները : կը
գտնուին : Այժմ սակայն Ձարը խա-
ւար է պահանջում հայկական չըջա-
նակներում, այնտեղ հայ գիրք մե-
տղութեան է գատապարւած, այն-
ինչ գեռ թուրքերոյ աշխատանքում
այդ կտի գործողութիւնը չէ կա-
տարելի նոյն չափով :

Թող տիրանայ խաւարը : ինչքան
ուզում է աւելի՛ մտի, աւելի՛ թան-
ձրը ու մտայն : մենք հաստատում ենք
թէ մեր ճակատագիրը կը գրէ ինչ թէ
առաւ սրտակտութեան ձեւքը իր ճն-
չումով, հալածանքով ու ապագա-
թեամբ՝ այլ հէնց հայ ժողովրդի գի-
տակից ու բնութաւ տարրը, իր սե-
փական ձեւերով... :

Էմիլ Եղաւշեանց
20 նոյ, 1903

ՀՆՁԱԿՅԱՆ ԲԱՅՔԱՅՈՒՄԸ

(L'abolition de l'esclavage)

Ամբողջ մեծ Բրիտանիա ու մաս
նաւորապէս անգլիացի հայաստանը
արհաւիրքով մը հանդիսատես եղան
հայ առուելին սակ գործում հնչակ-
եան եղբայրասպան ու հսկամարդ-
կային ոճերներն : որոնց հիղի-
նակները անմիտ խիզախութիւնը
ու՛նեցան իրենց ընկերասպան թաք-
թիքը երկարաձգել Բոթլին՝ Օտտոս,
ու Պոսթոլէս՝ Լոստոն : Եւ հնչակ-
եաններու մաքիական գործողութիւն-
ները : առանց յապաղումի պէտք
է ըսել սրտի անհուն թախծով մը,
ազգային անդիտ հանգամանք մը ստա-
ցաւ եւ րոպական ու անդիական մա-
մուլին մէջ մասնաւորապէս անստոյգ
եւ թիւրիմաց մակնութիւններու
պատճառաւ, որոնք բաւական եղան
անգլիական հանրային կործնիքը մեզ
նկատմամբ պղտորել :

Լոնտոնի քաղաքային երեսելի ու-
տիականական կազմակերպութիւնը
Մքոյլըտ Կարտ, որուն հնամենայ
տարեգրութեանց էջ արձանագրում
են եղեռնական քսամեցուցիչ պատ-
կերներ, շանթաւորու հնչակեան
եղեռնագործ գրուագներուն տհա-
լիութեան հանդէպ : Իսկ Լոնտոնի
ալբոյլ թերթերը, ախարհահռչակ
«Մանչեսթըր Գազետ» միջնիւ փոքրիկ
«Մանչեսթըր Գազետ» օր-նակներուն է՛ն
տագնապայտոյց նիւթը գործուցին
զայն հայկական եղբայրասպանու-
թիւնը ու համանման արատաւորիչ
մակդիրներու սակ, զորս ընթերցող
ամէն լոնտոնաբնակ հայու սիրտն
արիւննոտեցաւ տեսնելով հայ անուր
չարաչար կերպով ենթարկուած այն-
պիսի անպատուարք բնորոշութիւն :
Իսկզբան հայ պատիւն արտայան մա-
մուլը կատարելապէս անգիտակից
լինելով մանրամասն ծանօթութեանց
այս սահմակեցուցիչ՝ անակնկալին
առ թիւ ուրիշ բան չկրցաւ ըսել, բայց

յոյտարարել երկու գուզնթաց հաւա-
նականութիւններ, այսինքն կամ
ստորին արարք մը թուրք կառավա-
րական դաւադրութեան եւ կամ չա-
րաղէտ արդիւնք հայ ընդդիմադիր
յեղափոխականի մը լոկ անձնական
վրէժխնդրութեան : Սակայն շատ չը
աւելցնէ եւ անա մեծ չորնդով թեր-
թերը՝ գերագոյն ստիպողականու-
թեան ենթարկուած՝ հրապարակա-
անդիական հետաքրքիր հասարակու-
թեան ներկայացուցին հնչակեան
սարսափարեւ տօթի մանրերու է՛ն
ստորին փաստերը ու հոտուածական
երկարատեւ գրպարտութիւններու
հաշուետուարը, որու վնասակար հե-
տեանքները ահա՛ — Հարը իր տոաշ-
ուան րարի : Եւ համակրելի համբաւը
կատկածանքի ենթարկից, հայ
յեղափոխութիւնը տուճեց մեծապէս
ու եղաւ վերականգն :

Ճաօք սրտի հոս միջանդակով
պէտք չէ մոռնալ ըսել, որ Բէքտաւ Ռաի
աներկու փառատենչիլիերը իրենց հը-
նամեայ քրնտիկոսութեան ոգւով
զերպագրուած՝ իրենց զնդակահար-
տում ընկերով առթիւ թղթակիցնե-
րու յաճախ բարեկամական երթեւե-
կու : Երէն պատհանութիւն գտած՝ մի-
քանի սրտաւորիչ ամբաստանութիւն
ներ ալ յանդգնեք էլին Հ Յ Գաշ-
նակցութեան զէմ իբր համանման
խմուկ մը «Արժարիտաներու եւն :
Եւ ցուցադրուէ՛ համար
իրենց բարոյական անանկացումը,
ժաճարեաններու ու Պալեօքեաննե-
րու վրայ ի գործ դրուած արժանի
պատժները իբր օրինակներ հրամ-
ցուեցան մէկ կամ երկու թերթերու
միջոցաւ : Սակայն ոք որ մի քիչ հե-
տաժուա եղած է քննելու մի քիչ
նազարդէկեաններու ուսն անճարակ
հոգեբանութեանը զարմանալու ու ե-
է առթիւ չունի քանի որ նախար-
քիկ ինքն էր որ ասկէ տարիներ ա-
ռաջ «Տէլլի» նիւզով մէջ կը ջանար
անիշխանական գոյն մը տալ պան-
քայի Իսախանկան հերոսական ս-
րբերիս : այն միակ ամբողջիկ
պատճառաբանութեամբ թէ Իսախան-
կանկական գիւցաղելը ուղմբ եւ
ուժանակ գործածեք էին, որոն
սկզբունքով կը հսկառակի եղբ
հնչ : կեդրոնական վարչութիւնը :
այսինքն նազարդէկեանը եւ իր կիր-
Մակնոնայիններն ալ վերջերս ուղմբ
գործածեցին միջէ՛ անոնք ոչ ար իչ
խառնականեր էին :

Սարույ
Եստու՛ն կեղի

ԿՈՉ ՀԱՅ ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԵՆ

Ինչպէս անճատական : Նոյնպէս
հասարակական կեանքում կան հան-
գամանքներ, որոնք պէտք է միայն
արամարհել, ինչպէս ես արժամար-
հում էի վերջին երկու տարւայ բն-
թացքում հայ յեղափոխական հրապա-
րակի վրայ գտնուած մի կարգ մարդ-
կանց, որոնք վերջերս մենաշնորհ
են արել հնչակեան արշակաւանը եւ
նրա կրկնաւր : Սակայն այդ մի կարգ
մարդիկ սահման չգրին իրենց բու-
կան արարքներին, մանաւանդ մութ
անկիւններում, այնպէս որ ստիպուած

(*) Բայց ինչ հակասութիւն, մի
թէ՛ սօցիալիստներու համար ժամ-
հարեաններ եւ Պալեօքեաններ մարդ-
կային կազմակերպութեան մէջ վնա-
սակար սարքեր չէ՛ :

եղայ վերջապէս դիմել «Հայրենիք»-ի
խմբագրութեան եւ խնդրել որ բարի
լինի հրապարակել սոյն գրութիւնս,
որի նպատակն է պաշտպանել արդա-
րութիւնը եւ հայ յեղափոխական գոր-
ծիչի պատիւը :

Հայ հասարակութեան յիշողու-
թեան մէջ շատ ուժեղ կերպով տպա-
ւորեցին 1904 թիւի հայ յեղափոխա-
կան կեանքի մի շարք զեպքերն ու
անցուղիները, որոնք գարծել էին
իր ժամանակին մեծ ոգւաւորութիւն-
ների պարիւր, եւ այդ աղբիւրն էր
հնչակեան երկու հաստածների մի-
ութեան հարցը եւ դրա հետ միասին
Հ Յ Գաշնակցութեան հետ ճամ-
բայն գործունէութեան գաղափարը,
որոնք նկատուում էին մի նոր արշա-
լոյս հայ յեղափ. նորանոր ձեռնարկ-
ների ու աշխուրդութիւնների համար :
Հին ու նոր աշխարհներում հազա-
րաւոր հայ գաղթականները, ինչպէս
եւ կոտորածների ու վնջման մատ-
նում ժողովուրդը Մայր-Երկրում՝
սրպէս մէկ սրբա, հրճուում էր սոյս
նոր ու ք-Վայրակաւ երկուցմանի
առաջ եւ սրբ օրին սպասում էր մար-
մնացած տեսնել այդ քիչ հանուր ձգ-
տումները : Սակայն ինչ եղան, ին-
չու՛ վրէպեցին այդ հապարաւոր սր-
բարի ոսկի երազները, ինչու՛ երբ
քաղաքակրթւած մեծ ու փոքր ազ-
գերի հասարակական ուժերը համա-
խմբուում ու հաւաքական են գատ-
նում ու հեռագնաւ խառնում ինքն
իրենց մէջ, մեզանում դրա բոլորովին
հակասակն է կատարում : Վրէ՛ն էր
որ ինչպէս մի փոթորիկ միանգամից
բերեց աւելի թանձր անպեր հայ հո-
րիզոնում, եւ էլի կրկնեցին եղբայ-
րասպան ոճերներն ու ատուութիւն-
ները :

Այն հազաճանքները, որոնք եր-
կու տարիներից յետոյ ինձ օտիպեցին
խզել լուսութիւնը եւ նորից քայլ հրա-
պարակ, բայց մի քանի բողոքով, եւ
զիմով հայ հասարակութեան գրոտնք
սերս կերպով կապուած են սոյն վերո-
յիշեալ շրջանի եւ այդ զեպքերի հետ :
Եւ այս մի քանի բողոքով հրապարակ
գալս նպատակաւ չունի «Մեքիստո» մե-
լով պատկերը, — այդ կը լինէր մեծ
պատեւ ռճագործներին ու բախտա-
լուղիներին, — այլ մի կող է այս
հայ հասարակութեան եւ իմ այն ըն-
կերներին ու համակրողներին, եր-
կրում, կողկատում կամ Արտատա-
մանում, որոնք սրտերին թանց է
ինչպէս գործը, լոյսպէս արդարու-
թիւնը :

Տարբերակ. բայց եւ շատ արդար
ճշարտութիւն է, եթէ դիտել տամ
որ հնչակեան կուսակցութեան նկա-
րագրի մէջ հէնց սկզբից կար ինչ
որ մի երանգ, որ նրան մղում էր
զեպի ներքին կրիւներ, ինտրիգնի-
քաւեր եւ յաճախ զերայրասպան ձեռ-
նարկներ : Հէնց 85-86 թեւականնե-
րին, երբ հայկական գաւառները
արիւնի ու հրդեհի հայրենիք էին
գարծել, եւ Կիլիկիան այնքան թանգ
գնով մաքառում էր սասանապատիկ
հզոր թշնամու զէմ, երբ պատրազ-
մողները կողք ու կոտորած զոհերի
հառաչը գուրթ ու համակրանք էին
ներշնչում միջնիւ իսկ օտարներին—
հնչակեանները մտապել էին ինչ որ
ստոր էր, ինչ ու պարտականութիւն
էր, եւ վարակել էին կրիւներին,
պատակասէն եւ գուբերի տեսողով, եւ
յետոյ, ինչպէս դերասաններ, թե՛մ
էին բարձրացնում եղբայրասպանու-
թեան քստնելի մի տրամա, տխուր
սրտաճմրկի ու զէկատանդ իր բոլոր

տեսարաններով, Այդ թւականներում հնչակեան հրեանք օրկանիզով ջղած գուճիերը այնքան ուժգին էին, որ իրեն վերջիվերջոյ հասցրին մակարոյծի վիճակին, և ստեղծւած քաօսի ու ճահիճի մէջ այլևս անհնար էր «Հնչակ»ի հրատարակութիւնը շարունակել 1897ից յետոյ: Այդ թւականներում զես եւս չէի եկել այն եզրակացութեան, որ կարելի չէ անողջացնել այդ հրեանք օրկանիզով, և 1898 ու 99 թւականներին բուռն ճիգեր գործ դնելուց յետոյ, մի քանի անգիւղեակներով ամփոփուեցաւ, կարողացաւ վերականգնել «Հնչակ»ի հրատարակութիւնը և հետզհետէ վերականգնուեցաւ: Դրա համար հարկ եղաւ երկու տարւայ շարաշար աշխատանք ու զոհողութիւններ, շատ անգամ ծանր վտանգի սիւնով:

1900-01 թւականներին մտածեցի թէ հասած է ժամանակը վերջապէս սրբել 96 թիւի պատակտուի երբի ամօթը հնչ. կուս. ճակատից, և ձեռնարկել նախ միացումով երկու հնչ. հատւածները, և դրանից յետոյ համարաշար գործունէութեան պայմաններ մշակել շ. Յ. Գալանկեան թեան հետ: Այս երկու անհրաժեշտ ու պատմական ձեռնարկներից յետոյ կարելի էր մշակել ու ձեռնարկել յետագի ընդարձակ ու լուրջ գործեր, որոնք առաջնորդէին մեզ գէպի յազմութիւններ և ձեռնարկներ տալին մի առաջադիւծ ժողովրդի սգաւորական ձգտումներին. սակայն ճարձ ժամանակի ընթացքում լի շուրջ տեսայ անորոք ինտրիգներ ու գաւթի 0, բարտախնդիրների ու առաջակների շահերը վտանգւած էին: Աստիճաբար հի էր այդ սարուկ մարդկանց և որոշել էի առաջ տանել սկսւած միութեան բանակցութիւնները: Մի մեծ հատոր է հարկադոր ներկարարելու այն բոլոր ստորինտրիգները, մարդկային ցած բնազդներն ու նկարագրերը, որոնք աւելի անոտ սնունդի գոտան և դուրս բերին իրենք իրենց 1901 թիւի գումարում հնչ. ընդհ. պատկամ. ժողովում: Այդ «ժողովը» կոչւած էր իմ ընդ. այսոց և գլխաւորապէս իրագործելու երկու հատուածների միութիւնը, զի մի համարաշար գործունէութեան հիմունքներ շ. Յ. Գալանկեան թեան հետ և ծրարել յիշագի. մեծ ձեռնարկներ: Ս. ծարր. մի ազգի գոյութեան վերաբերեալ ամենակենսական խնդիրներ յանձնել էին մի խումբ թգուճիներին՝ զոհիկներին ու քոթախանդիրներին. ինչպէս է, բացառութեամբ են այն յարգելի ընկերները այդ «ժողովներում» կամ դուրսը, որոնք չը խնայեցին ազնիւ ջանքեր՝ փրկելու մի կապակցութեան պատիւը: Թղթակների այդ զարմանալի համերգը տեսել է ամբողջ 4-5 ամիսներ Լոնտոնում և մենք ստիպւած էինք ակնատես լինել ամէն օր մի ճիւղաղային դասի, ինտրիգի. կոթի ու որոնց առաջ բերել կարող էին ամբողջական կեանքը և այդ միջնորդութեամբ անւած երեւակայութիւնները: Գրեթէ զուարման անաղին շարաթում այդ հնչակ. ժողովը ընդունեց նոյնութեամբ հակառակ լարւած ճիւղաղային ինտրիգների, բաժանւած հնչակեանների հետ միութեան այն պայմանները, որոնք մշակւած էին իմ նախաձեռնութեամբ, «վերականգնւած» հնչակեանների ներկայացուցիչների հետ: Սակայն հնչակ երկրորդ շարաթից սկսած այդ սարուկ

ու գոհիկ արեւտական մեծամասնութիւնները ոչնչացնում էին, կամ աւելացնում ու պակասացնում էին այն, որի համար նախորդ օրէակ նախում որոշում էր կայացել, և ստիպան դաւերը սյնքան անամօթ կերպով արտայայտեցին որ մասնակցող պատուաւոր ու ազնիւ գործիչները ստիպւած եղան թողնել ու հեռանալ:

Չորրորդ շարաթն էր. կարծեմ, երբ բոլորովին համազօրեցի որ այդ հրեանք օրկանիզը չի կարելի բուժել և որ միջնորդը թունաւորւած է: Կարելի չէր այլ եւս ունէ լուրջ գործ անել, մինչև իսկ անձնակազմի պաշտպանել, այնպիսի մարդկանց հետ, որոնք մօտ պատիւն ու գործի սրբութիւնը նշանակութիւն չունին, ինչ մեւ էր անել հետեւեալը. — Յայտարարել որ հրատարակութիւնը կեղծութիւն էր: Պատգ. ժողովի անդամի պարտականութիւններից և միութեանակ հետանում եմ հնչ. կուսակցութիւնից, Գրանից յետոյ ստացայ այդ «ժողովի» կողմից երեք նամակներ, որոնցում խնդրում էին մասնակցել. սակայն թողի անպատասխան: Կրդարեւ շատ սխուր էր անենել ոչնչացումը այնքան թանգ աշխատութիւնների և ժողովրդի ամենաբուռն ու ազնիւ ստատուգրութեան, որը հեշտ կերպով կարելի էր ստանդորդել գէպի վսեմ ու բեղմնաւոր ձեռնարկներ: Այն բոլոր դասն հետեւանքների և եղբայրսպան ուճիրների պատասխանատուութիւնը ընկնում է այդ մի կարգ մարդկանց վրայ, որոնք սակայն նոյնքան դաւադար ունին ունէ պատասխանատուութեան մասին, ինչքան գայը կամ օճը իրենց արարքների մասին: Հրատարակութեան յետոյ թող շուտեցի ինչ լսել կամ կարգալ ունէ բան, որ վերաբերում լինէր այդ երկու հատուածների նորանոր կոթիներին և դրանց յաջորդող ամենատեսուր հետեւանքներին: Սակայն մի քանի ընկերներից ստացայ նամակներ, որոնք հաղորդում էին զայրացած թէ այս առարայ սկզբները «Հնչակ»ի ինչ որ համարում հրատարակւած է իմ կեղծ ու խիսական անունները միասին յիշելով, թէ ինչ որ յարաբերութիւն պահպանւած և կազմւած ինչ որ դաւադրութեան մասնակցած լինելով «վերականգնւած» հնչակեանների հետ ինչ արտաքուստ են կուսակցութիւնից: Եարլատանութիւն է թէ խնայարութիւն իսկապէս, որ ցոյց են տալիս այդ մարդիկ, ինչպէս ակնաւորներ, որոնք սենաչորհ են դարձրել Հնչ. կուս. աւերակները իրանց չոր ձեռքերով կատարւած: Արդարեւ դրանք չունին պատիւ զգացումը և չեն զգում ունէ ամօթ այդ անպատասխանատուները:

Ես ստիպւած եմ գլխով հաստակութեան և յայտնել որ այդ անձերը թէ ստախոսներ ու շարլատաններ են և թէ միեւնոյն ժամանակ խնայարներ: ա) որ ես ինքս եմ հրատարակել, հետեւաբար իրենք չեն կարող ինչ արտաքուստ և իրենց այդ վարմունքը կարելի է անւանել անմիա յարձակում: Բ) որ հրատարակութեան յետոյ պահպանել ինչպէս «հին-հնչակեաններին» նոյնպէս և «վերականգնւած» հնչակեաններին: հետ, մինչդեռ իրենք էին երկար ամիսներ միասին ժողովներ անւում գործակցում, ապրում ու քէֆ աւում. հետեւաբար եթէ «վերականգն

մեաների» հետ յարաբերութիւն ունենալը «վերականգնութիւն» է, հնչակ իրենց երեխայական ու անմիտ արամաբանութեան համաձայն իրենք՝ «Հնչակում» այդ յայտարարող անպատասխանատու անձերն են «դաւաճանը» ու «արտաքուստը»:

Անցնենք այդ ամէն հակասութիւնները և գանք մի ահուրի կէտի, որ ինչ ամ ստիպում է չարդի այդ անձանց երեաներին «դաւաճաններ» բառը: Երկար տարիներ ընթացքում իմ ուսերի վրայ տարել եմ յեղափոխական ու պատմաբանական ամենաժանր ու վտանգաւոր և միեւնոյն ժամանակ ամենակենսական դերերն ու պարտականութիւնները թէ երկրում թշնամու բանակների ու թնդաթոյներին առաջ և թէ արտասահմանում, և այդ բոլորը բարոյական, ֆիզիքական ու նւթական ծանր զոհողութիւններով: Սակայն ես ունիմ ճնողներ, ազգականներ, ինչք եւս. Մայր երկրում, — բոլորը զոհ թշնամու վտար քմահաճոյքներին: Ես միշտ թագգրել եմ իմ խիսական անուները և հրապարակում գործել եմ ծածկաւոր նով՝ շփոտնեղու նրանց, որոնք այնքան թանգ են սրտիս, և բացի այդ ես չունեմ ունէ իրաւունք նրանց վտանգելու: Եւ այս բոլոր պարագաները նոյնքան ծանր էին այդ մարդկանց, որոնք քաջութիւն ունեցան հրապարակելու և վտանգելու անմիջ ու թանկագին անձնատուրութիւններին: Եթէ երբ և է գործել է ոճիր, այս ամենաժանրներից մէկն է, և ոճրագործները թագնւած են յեղափ. գործի անւան տակ: Ինչ մնում է այդ մարդկանց կոչել դաւաճաններ, մատնիչներ, և խնդրել յանձնել հասարակական կարծիքին և պատմութեանը: Այո՛, այդ մարդիկը ոչ աւել են, ոչ պակաս, քան մատնիչները, որոնց մենք պատժում էինք երկրում գնդակներով ու կախաղաններով: Բայ դրանք չունեն մինչև իսկ խղճահարեղու ու ամաչելու զգացումը, աւելի ցած քան Ափրիկէի վայրենին:

Հնչակեան մենաշնորհներին բարոյական այդպիսի սնանկութիւնը, շահատակութիւնները, միութեան հարցում դրանց կատարած ամենատեսուր դերերը, նիւթական ահագին զեղծումները և ամէնից վերջը, ինչպէս թերթները հայորդում էին Ձիթճեանի և Ծահլիսի սպանութիւնները, — այս բոլորը տեսնելուց յետոյ, մարդ պէտք է ապշած ու զարմացած հարցնի ինքն իրեն, թէ ինչպէ՞ս, ինչպէ՞ս համար այսպիսի բախտախնդիր ու մոթը անձնատուրութիւնները քաջութիւն են ունենում երեւան գալ հայկ. հրապարակում, և քարը տալիս իրենց սեւ գոյութիւնը և միւս կողմից յանդգնում ցիխեր չարդի այս ու այն գործիչի պատել ու անւան վրայ: Ինչքանի կրկնւում է այդ մեղամազոտ ու սխուր «ինչպէ՞ս» հայ գործիչի գլխում, քինչու՞ այսպէս և յիշուի գործիչի սիրտը լեցում է դառնութիւնով ու հիասթափութեամբ, երբ մասնաւոր լուրջաբանութեամբ քաջութիւն կեանքը ունէ քաջաբարկութեամբ ժողովրդի հաս. գործիչի կեանքի հետ: Ս' համեմատութիւն չի կարելի է: Եւ ինչու՞ այսպէս: Արդարեւ պատասխանը նոյնքան տխուր ու յուսահատական է, ինչքան դուրս հարցը: Դա կարելի է բացատրել մի-

այն հայ ժողովրդին մտաւոր ու հասարակական կեանքի արտայայտութեան մէջ, այդ ժողովրդի ներկայ ազգային հոգեբանութեան ու նրա ընկղմած սոցիալութեան մէջ: Ոչ մի ժամանակ այդ շարլատանները չէին յանդգնել գալ հրապարակ, եթէ հայ ժողովուրդը մատնւած չլինէր ջղած գոյութեան, որը հասցնում է նրան զանգուածային խելագարման և սրտի ու մտքի սնանկութեան: Մարդիկ խարում ու ստում են յայտնի կերպով, գողանում են, մատնում են, սպանում են ազնիւ գործիչներին, ու դեռ եւս չկայ մեղանում առողջ կարծիք՝ քննելու, բողոքելու, պատմելու և հրապարակելու գոբու վանտելու այդ ստորաքարչ թշուաղանքներին: Այո՛, հայ ժողովուրդը չլինի է մտքով ու ֆիզիքապէս, նա չունի սիրտ, նա չունի կարծիք. — Ահա թէ ինչու այս մարդիկ սանձարձակ այլաւում են, ինչպէս նէրօնի գլխիւսները, առանց անշնալու որ իրենց ճակատին դրօշւած է սեղալայնապան, «թշուաղական» բառերը:

Սրբազան պարտք եմ զգում դիմել, կոչ անել հայ հասարակութեանը և բոլոր ընկերներին ու համակողմներին և ինչպէս որ ջանան մարքել հրապարակ այդ ամէն տեսակ միբարոյաների և յեղափոխական գործը դնել լուրջ ու ապանով ուղիի վրայ: Հայ ժողովրդի մեծագոյն մասը բնաջինջ է լինում իր հայրենիքում, իսկ մի մասն էլ, երիտասարդ ու թարմ ուժը, մաշում ու կորչում է պանդխտութեան գրկում: Դեռ եւս ուշ չէ սակայն փրկելու այդ թշուառ ժողովրդին և բարձրացնելու նրա կեանքը քաղաքակրթութեան պատանդանին վրայ: Թող ժամանակ համարէ թափ տալու ուսից շախապաշարուներին և գծուճ հաշիւների ցնցոտիները և որպէս մէկ՝ քիմելու գէպի գործը, ազգային ազատագրութեան գործը, նրան բարձրացնելով ցիխից ու ճահիճներից, վերջին տարիներին ընթացքում շատ ծանր կերպով ձեռք բերւած փորձառութիւնները ինչ ամոռնեցին, որ Հնչակ. կուսակցութիւնը վերաւում է խորտակւած ուսի բեկորների, որոնք յանձնւած են պատմական քամու հոսանքներին և այդ անդառնալի հոսանքները նրանց մղում են բոլորովին հոռու և սրամագծօրէն հակառակը հայ ժողովրդի կենսական շահերին ու ձգտումներին: Նրան չի կարելի վերանորոգել, բժշկել, բայց միեւնոյն ժամանակ չպէտք է թող տալ ընդունակ ու ժերը սպառեն անուխ նախապաշարուներով ու ժողովուրդի թիւնով: Յիշեցնելով նրանց հայ ժողովրդի ներկայումս ենթարկւած ճգնաժամը և անհետանալու վտանգը, յիշեցնելով նրանց մարդկային այն բոլոր պարտականութիւնները, որոնք ներկայան պէտք է լինեն ամէն մի հայի սրտին, ես կոչ եմ անում բոլոր հայրենակիցներին, որ մի կողմ թողած նախապաշարուներն ու ահատական հաշիւները, հաւաքաբար թէ անստաբար, Ձեռի-Ձեռի ԾԸ-ԻԱՄ ԱԱԱԿԵՆ ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՆՆԱԿ-ՑՈՒԹԵԱՆ և և, նախապատասխանով ու մշակելով յեղափոխական լուրջ գործունէութիւնը՝ պան օգնել տանւած ու անպաշտպան ժողովրդին:

Պէտք է խոստովանել նախ որ շ. Յ. Գալանկեան թեան իրեն բարձր պահեց անձնական ու գծուճ ինտրիգ-

ների հովերից, իսկ միւս կողմից հայ յեղափոխութեան ու անհատները—ցուած կամ չհզօքացած եւ կամ պատկանած այս ու այն ուղղութեան—անկարող են առանձին կանգուն պահել հայ յեղափոխութեան գործը ու պաշտպանել նրա շահերը: Պատժութիւնը եւ ներկայումս քաղաքակրթւած ազգերի քաղաքական կեանքը որոշ է տալիս թէ ինչպէս զանազան ուղղութիւններ կամ դարձեալ պատկանող կուսակցութիւնները խմբերն ու անհատները միասնաբար են երբ ունէ հարց վերաբերում է ազգային ընդ. շահերին:—այնտեղ տարբերութիւնները ոչնչանում են եւ «ես» երբ տեղի տալիս սուպրէզից: Եթէ ոչ խելքով, գէթ ինքնապաշտպանութեան բնագոյով, պէտք է հայ ժողովուրդը համախմբէ իր ոյժերը եւ պաշտպանէ հասարակական բնածուղէմ, մամանակը հասած թող լինի վերջապէս, որ հայ յեղափոխ. անհատներն ու խմբերը, ինչ դոյնի եւ ուղղութեան էլ պատկանելիս լինեն ներքինը, ցածր դնեն եսամոլ հաշիւներ պարկերը եւ իրենց ոյժերը կեդրոնացնեն այն լոքոսովի մէքէնայի մէջ, որը նրանց կարող է տանել ազատութեան եւ ազգային ազատագրութեան ճանապարհով:

Հրաչեայ
«Հայրենիք»
20 հոկտ. 1903
Լոնտոն:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ

Ազգ. վարժարանի ուսուցիչներէն Երուանդ Սրմաքէշխանլեանի գործերն ընդհանուր հսկողին եւ որի շարժանակիցներու գէմժանր վերաւորաքերը հասուցած ըլլալով ուսուց. մարմինը փաստերը քննած եւ Երուանդ Սրմաքէշխանլեանէն գոհացում պահանջած է, որ ր սակայն չէ ստացած: Ասկէ զատ նոյն անձը իրեն թոյլ տուած է աւելի կոպիտ վարմունքներ իր պաշտօնակիցներուն դէմ: Դպրոցին ընդհ. հսկիչը եւ գլխաւոր ուսուցիչը իրենց վարկը տուած չլուծու համար հողաբարձութեան ներայացուցած ին հրաժարական: միեւնոյն ժամանակ յայտարարած են, որ իրենք այդ պարոնի ներկայութեամբ օգտակարապէս յառաջ չեն կարող տանիլ մատաղ սերունդի դաստիարակութեան փոփոխ գործը, որովհետեւ պարոնը զուրկ մանկավարժական ամէն պատասխանակունտէն անկարող է եւ չգիտնալով վարուիլ իր վրայ հրաժարած աշակերտութեան հակակրօթիւն, պարագայ մը, որ կը յիմէ դաստիարակութեան գործը:

Հողաբարձութիւնը այս պատճառները բանական գտնելով եւ որորդի մը ներկայութեամբ կը յայտարարէ դպրոցին ընդհ. հսկիչին, որ Երուանդ Սրմաքէշխանլեանը պիտի արձակուի պաշտօնէն եւ կը հրաւիրէ ընդհ. հսկիչը շարունակել իր պաշտօ-

նր: Բայց երկուշարթի առաւօտ հողաբարձութեան այդ որոշումը չէր գործադրուած: Ընդհ. հսկիչը եւ գլխաւոր ուսուցիչը ստիպուած կը լլան գպրոցէն հեռանալ: Աշակերտութիւնը անցուցարձէն իմանալով փոխարեւը զինուած կուզէ յարձակիլ Երուանդ Սրմաքէշխանլեանի վրայ եւ ետ բերել տալ իրենց համակրած ուսուցիչները: Աղջիկներ կուլան, տղաքը յուլուած կուլեն Ե. Սրմաքէշխանլեանը գպրոցէն արտաքսուլ: Ամենը միաբերան կը պրոան. «մեր միւսիւնները ես լծող գան, մենք միւսիւ Երուանդը չենք ուղեր»: Դասարաններու գոնէրուն վրայ աշակերտները փակցուցած են այս պարունակութեամբ թուղթեր. «միւսիւ Երուանդը դուրս, դասարանները գոցէ»: Այս օրինակ թուղթ մը հսկիչը երորդի մը ներկայութեամբ յանձնած է հողաբարձութեան անդամներէն մէկուն եւ կը գտնուի աւոր քով:

Հողաբարձութիւնը շկրնալով զսպել աշակերտութիւնը, անխնայութիւնը կուենայ դպրոցը փակել, փոխանակ առժամանակ կերպով գոնէ Ե. Սրմաքէշխանլեանը հեռացնելու: Աշակերտութեան բողոքը երթալով կը սաստկանայ, անոնք կը սպասին որ Ե. Սրմաքէշխանլեանը դուրս ելնէ եւ գանի ձեծեն: Տնտեսին հսկողութեան տակ հերոս ուսուցիչը տուն կը զրկուի: Աշակերտութիւնը ամեն օր դպրոցին առջեւ կընէ բողոքի ցոյցեր եւ կը պահանջէ իր երկու ուսուցիչները:

Այս առաջին անգամը չէ. դպրոցին սկիզբը Ե. Սրմաքէշխանլեանի զէմ պատահած է աշակերտական աւելի ուժեղ ապստամբութիւն մը, որ երկու ուսուցիչներու ջանքերով հաղիկարողացած է մարուիլ:

Տխուր է արձանագրել, որ հողաբարձութիւնը մինչեւ այսօր ալ չէ առած վճռական քայլ մը եւ դպրոցները կը մնան փակ: Այսքան լծու ընթացք պաշտօնական մարմին մը ներհի չէ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պուլկար կառավարութիւնը թիւրքիայէն կը պահանջէ պուլկար եւ մակեդոնացի բանտարկեալներուն ընդհ. ներսմ. առարկելով թէ առանց ատոր վերջնական խաղաղացում մը անկարելի է: Դուրս կը տատանի եւ չուզեր ազատ արձակել Սելանիկի ումբաձիգները:

—Հակառակ պուլկար կառավարութեան տուած խոստման՝ Դուրսը զմուարութիւններ կը յարտցանէ ընդունիլ մակեդոնացի գաղթականները եւ գաղթող-

ներու տեղերը կը լիցնէ մահմետականներով: Բանտարկուեցան վերագարցող վեց գաղթականներ: Պուլկարիւր բողոքեց Դրանս —Յօնչէվ, որ ներկայիս վիէննա կը գտնուի եւ շուտով Բէրլին պիտի երթայ, տեսակցութեան մը մէջ յայտներ է, որ յառաջիկայ գարնան Պուլկարիւր եւ Թուրքիոյ միջեւ պատերազմը անխուսափելի պիտի ըլլայ: Ան կը հաստատուի որ Սերպիա պիտի միանայ Պուլկարիային ընդդէմ Թուրքիոյ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Միացեալ նահանգներու հիւպատոսը կը հայտարարուի յարձակում կը հրէ թրքական ոստիկանութեան կողմէ, որովհետեւ նա կընդդիմանար ամերիկահայատակ հայումը ձերբակալութեանը: Հիւպատոսը ամերիկեան գրօշակը հիւպատոսարանի վրայ պարզել տալով՝ ինքը կը մեկնի Պէյրութ:

Սլէքսանդրէտի կառավարութիւնը կը յայտարարէ թէ հիւպատոսը ոստիկաններուն գաւազանով ձեծեք է եւ լծ հայու ձերբակալութեան վերջը իր գաւազները փորձեր են հայը ապստել: Կարծես թէ իր կառավարութեան պատահանները կորեցին: Միացեալ նահանգներու նախարարը Պ. Լէյքման Բ. Դրան հանդէպ խիստ քայլեր է առել եւ գոհացում պահանջեր:

—Աստրիոյ եւ Ռուսիոյ զեսպանները հաղորդագրութիւն մը տուին Բ. Դրան Ռուսիայի նահանգին համար թուրք կառավարութեան սկզբունքով ընդունած բէֆօրմներու ծրագրի ինր կէտերուն մասին: Դիւնոյն ժամանակ երկու զեսպանները աստրիայի ընդհանուր հիւպատոս Ֆոն Միլլեր եւ Ռուսիայի ընդհանուր հիւպատոս Դրմիրիքը առաջարկեր են ինչպէս այս երկու պետութիւններու քաղաքական գործակալները Մակեդոնիոյ մէջ:

—Մանասթիւրի մէջ թուրքերը եւ ալպանացիները մղկիթներու մէջ հոն բազմութեամբ ժողուած կրկին անգամ բողոքեր են բէֆօրմներու զէմ եւ վճռել են ամէն զնով, արդիւնիլ ուսուստրիական գործակալներու մուտքը Մանասթիւրի մէջ:

—Ռուսաստանի եւ Աստրիոյ մտադրութիւնը Մակեդոնիոյ մէջ թրքական ոստիկանութեան հրամանատարութիւնը թրքական ժառանգութեան մէջ գտնուող գերմանացի կաղթակիր պուլի մը յայնձեւելու մտադրութիւնը չը պիտի իրականանայ, գերման կառավարութեան մակեդոնական

հարցի կանոնադրութեան գործ. նականապէս մասնակցած չըլլալուն պատճառով: Հետեւաբար Ռուսիա եւ Աստրիա ընտրութիւն կայացուցեր են իտալացի զենեւրալի մը վրայ, որ ձեւականութեան համար նախ պիտի մտնէ թրքական ծառայութեան մէջ, վերջը Սուլթանի կողմէ նշանակուելու համար:

—Ռուսիոյ, Աստրիոյ եւ Երուսաղիմի ներկայացուցիչները ժողովի նստած էին բարենորոգմանց ինք կէտերը քննելու համար, Դուրսը ժողովը արգիլեց. զեսպանները այս բանաբարութեան զէմ բողոքեցին:

—Երկու պետութեանց Մակեդոնիոյ համար նշանակած գործակալները շուտով կը հասնին Պոլլոս:

—Սուլթան Մուրստ հիւանդացած է. բժիշկները կը խնամեն զինքը:

ՓՈՒՐ ԹՂԹԱՏԱՐ

Ֆիլիպէ նոյ. 1

Այս տարի ալ Պետոի եւ ընկերներու տարեկարծի առթիւ հոգեհանգիստ կատարել տուաւ հերոսի հայրը:

Հոգեհանգիստի արարողութեան ներքին Պ. Վարդօ հակիրճ կերպով վեր հանեց Սէրէձեաններու մեծութիւնը, անոնց կատարած մեծ գործը, շեշտեց մասնաւորապէս թէ մեր սրտերուն մէջ ինչ մեծ տեղ պէտք է բռնեն Սէրէձեաններու յիշատակը՝ որոնք շորս միլիոն դժբաղդ հոյութեան տառապանքի, ցաւերու ամբողջ մարմնացումը եղած են:

Ժողովուրդը ցրուեցաւ տխուր եւ յուլուած սպաւորութեան տակ:

Թղթակից

ԿԱՐԵՒՐ ԱԶԴ

ձանրոդներու Համար

Նախկին Օթէլ Ռոտօփի եւ այս ամառ Հիւսարի մէջ Օթէլ Պուլկարիսի վարձակալ Աստիկ Սրապիան, այժմ բացած է պանդոկ մը Ֆիլիպէի Մեծ փողոցին վրայ:

ՕԹԷՂ ՍԱՆԹՐԱՂ

Անուամբ: Յաճախողները գոհ պիտի մնան մաքրութենէն եւ արագ ծառայութենէն:

Տնօրէն
Աստիկ Սրապիան
6 Նոյեմբեր, 1903
Ֆիլիպէ 4-12

ՕՏՎՈՐՈՒՆԻԿ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна